ԵՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԻՄՆԱԴՐԱՄ
МЕДИЦИНСКАЯ АКАДЕМИЯ ЭРЕБУНИ ФОНД
EREBUNI MEDICAL ACADEMY FOUNDATION

EREBUNI
MEDICAL ACADEMY FOUNDATION

Address: Titogradian 133, 0087, Yerevan, RA
Tel: +374(10)47-07-60, +374(99)00-67-67
info@erebuniacademy.am, www.erebuniacademy.am

22

Հաստատում եմ՝

Ռեկտոր Ա. Ա. Իկիլիկյան

« » _____ թ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Երևանի Էրեբունի բժշկական ակադեմիա հիմնադրամի աշխատակիցների էթիկայի կանոնների և վարվեցողության կանոնակարգով թույլատրվում է ակադեմիայի տարածքում թույլատրելի և արգելվող գործողությունները, դրանց նկատմամբ հսկողության իրականացումը և կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը:

1.2 Սույն կանոնակարգը մշակվել է ՀՀ Սահմանադրության ՀՀ Աշխատանքային օրենսգրքի ակադեմիայի Կանոնադրության և այլ ներքին իրավական ակտերիկ հիման վրա:

2. Ակադեմիայի աշխատակցի էթիկայի պահպանման կանոնները

2.1. Հարգել ՀՀ պետական խորհրդանիշը և պետական լեզուն

2.2. Լինել կարգապահ, ցուցաբերել օրինակելի վարք, աշատակիցների հետ շփման լմեջ լինել զուսպ

2.3. Ակադեմիան ներկայացնելիս լինել արդար և շրջահայաց

2.4. Աշխատանքային հարաբերություններում պահպանել ենթաակարգությունը

2.5. Արդար վերաբերվել գործընկերներին, ներգրավել նրանց իրենց առնչվող որոշումների կայացման մեջ, հիմնավորել սեփական կարծիքը, արտահայտել այս կամ այն որոշման նկատմամբ դիրքորոշումը

2.6. Գործընկերների համար հավասար հնարավորություններ ստեղծել գիտելիքների և հմտությունների զարգացման գործում

2.7. Ցուցաբերել նրբանկատություն, հարգել և հայցել գործընկերների մասնագիտական կարծիքը, գնահատել գործընկերների կատարած աշխատանքը

2.8. Չխոչնդոտել գործընկերների աշխատանքային պարտականությունների կատարման գործընթացը

2.9. Գործընկերների հետ հարաբերություններում լինել նրբանկատ, դժգոհությունն արտահայտել միայն նրա ներկայությամբ

2.10. Ուշադրություն դարձնել այն իրավիճակներին, երբ գործընկերոջ անձնական շահը հակադրվում է Ակադեմիայում իր պարտականությունների կատարման հետ
2.11. Անկողմնակալ վերաբերմունք դրսևորել ուսանողների, գործընկերների և այլ աշխատակիցների նկատմամբ
2.12. Հարգել ուսանողներին և աշխատակիցներին՝ անկախ ազգությունից, սեռից, դավանանքից, սոցիալական ծագումից
2.13. Խնամքով վերաբերվել Ակադեմիայի գույքին
2.14. Առողջության սպառնացող վտանգի մասին տեղեկացնել անմիջական ղեկավարին
2.15. Աշխատանքի ներկայանալ կոկիկ, համապատասխան ոճի հագուստով
2.16. Աշխատանքը և ընդմիջումը սկսել և ավարտել Ակադեմիայի կարգապահական կանոններով սահմանված ժամերին
2.17. Բացառել անձնական, գույքային կամ ֆինանսական և այլ շահերի հետ կապված այնպիսի գործողություններ, որոնք խանգարում են նրա կողմից աշխատանքային պարտականությունների բարեխիղճ կատարմանը
2.18. Չչարաշահել պաշտոնական դիրքը կամ Ակադեմիայի հեղինակությունը իր կամ այլ անձանց համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար,
2.19. Չհրապարակել իրեն հայտնի դարձած ծառայողական գաղտնիքը, գործել բացառապես իրեն վերապահված լիազորությունների շրջանակում
2.20. Պատրաստակամություն դրսևորել օգնելու և աջակցելու գործընկերներին
2.21. Չհետապնդել ուսանողներին՝ քննադատության, կարծիք արտահայտելու պատճառով, չնսեմացնել սովորողի պատիվն ու արժանապատվությունը

3. Էթիկայի կանոնների նկատմամբ հսկողություն

3.1. Ակադեմիայում էթիկայի կանոնների նկատմամբ հսկողությունը իրականացվում է կադրերի բաժնի կողմից
3.2. Ակադեմիայում ընդհանուր հսկողությունը իրականացնում են ռեկտորը, պրոռեկտորը, անվտանգության աշխատակիցը
3.3. Էթիկայի կանոնների խախտման դեպքում աշխատակիցը ենթարկվում է կարգապահական պատասխանատվության՝ համաձայն Ակադեմիայի ներքին կարգապահական կաննոնների և այլ իրավական ակտերի